ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am,
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

11.03.2020
344-66

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ»
ՓԲԸ գլխավոր տնօրեն Անդրեյ Սինյակովին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սինյակով,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել INFOCOM լրատվական կայքի լրագրող Թեհմինե Ենոքյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Հունվարի 15-ին լրագրողն ուղարկել է տեղեկություն ստանալու հարցում, որը սակայն մնացել է անպատասխան:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Լրագրողը անձամբ նկարել է, թե ինչպես են Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի թափոնաջրերը լցվում Ագարակի և Կարճևանի բնակիչների այգիները: Ինչ է իրականացնում Կոմբինատը բնակիչներին և շրջակա միջավայրը վնասը կանխարգելելու և փնասը փոխհատուցելու ուղղությամբ:
2. Լրագրողն իրականացրել է տեսագրություն որտեղ պոչանքը հոսլով լցվում է ուղիղ Արաքս գետը: Ե՞րբ է և ո՞ւմ կողմից է կոմբինատը ստացել պարզվածքը լցնելու թույլտվություն: Տրամադրեք խնդրում ենք թույլտվությունը հաստատող փաստաթղթերի պատճենները:
3. Դարամազ և Հովիտ պոչամբարները որևէ կեպ ցանկապատված չեն և այնտեղ մուտք գործելու համար որևէ խոչընդոտ չկա: Նախատեսո՞ւմ եք արդյոք այդ տարածքը ցանկապատել:
4. Այդ պոչամաբարներում քամու ժամանակ փոշի է բարձրանում: Ինչ միջոցառումներ է իրականացնում կոմբինատը խնդրի լուծման ուղղությամբ:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան